Պարույր Սևակ

Ագահության գինը

Եվ պե՞տք է արդյոք
Քեզ միշտ ունենալ իմ կողքին: Ինչո՞ւ:
...Ու ես ծխում եմ,
Որ ծխի տեսքով
Այս ջլախախտիչ ագահությունը դուրս փչեմ ինձնից,
Ջանամ գոհանալ իմ ունեցածով,
Որ շա՛տ է այնքան:
Մի՞թե, տե՛ր աստված, շատ չէ իսկապես:
Բայց կյանքի փշոտ շարժուձևերից, ինչպես կեռերից,
Կախված ճոճվում են
Ու մեզ են կանչում ագահ ըղձանքներ:
Բայց կյանքի փշոտ շարժուձևերից, ինչպես կեռերից,
Կախված ճոճվում են
Կարկատանները մեր ծվատ հոգու...
Ես չե՛մ կամենում, որ իմ պատրանքը փոխվի պատանքի
Եվ հետո, ծվա՛տ, կախվի աշխարհի կեռերից փշոտ:
Ես սիրում եմ քեզ
Ու քեզ հետ նաև... անհնարինը՝
Ա՛յն գոհությունը,
Ում չի՛ հանդուրժում մեր գոյությունը:
Ուրեմն ի՞նչ անել,

Ինչպե՞ս սիրել քեզ - սիրվել քեզանից և...
...Էլ չուզենալ
Ոչի՛նչ ավելի.
Սեփական իղձը, դավաճանի պես,
Գամել չորս մեխով,
Սեփական ցավին
Չորստապակ մեղր քսել ու կլլել՝
Տհաճ, բայց բուժիչ դեղահատի պես,
Սեփական մտքից
Կտրել ուղղանկյուն մի քառակուսի
Ու վրան գրել սեփական արյամբ.
«Եղա՛ծն էլ շատ է»,
Գրել ու մեխել սեփական ափին,
Եվ ամեն վայրկյան ընթերցել ծածուկ՝
Դասը չիմացող աշակերտի պես...

11.III.1964թ.
Դիլիջան